ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հուլիսի 2011թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.53 շենքի 12-րդ հարկի հ.60՝ մեկ սենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.12.2007թ. հ.2539023 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուրեն Ղազարյանին և Արման Ղազարյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին>> հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2000 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> հ.1070 որոշմամբ նախատեսվում էր Երևան քաղաքում 2001 թվականին քանդել 4-րդ կարգի վթարային չորս շենք՝ Շինարարների փող.հ.6 շենքի 4-6-րդ մուտքերը, ֆուչիկի փող. հ.հ. 19,10 և Սիսակյան փող.հ.16 շենքերը, իսկ այդ շենքերում բնակվող սեփականատերերի, վարձակալների և փախստականների ընտանիքներին զբաղեցրած բնակարանների համար տրամադրել դրամական փոխհատուցում՝ /գումարը հաշվարկված էր ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հրապարակված 2001թ. առաջին եռամսյակի տվյալներով՝ հաշվի առնելով 2001թ. ընթացքում շուկայի հնարավոր արժեքային տատանումները /բացառելով 1-ին գոտու ձևավորված արժեքը/. 1 սենյականոց բնակարանը՝ 1795 հազ. դրամ, 2 սենյականոցը՝ 2750 հազ. դրամ, 3 սենյականոցը՝ 3550հազ. դրամ։

Երևանի քաղաքապետարանի կողմից 2001-2003թթ. ընթացքում դրամական փոխհատուցման գումար է հատկացվել 98 ընտանիքի։ Վերը նշված շենքերում բնակվող վարձակալների 10 ընտանիք, որոնց թվում է նաև Սուրեն Ղազարյանի ընտանիքը, հրաժարվել են ստանալ իրենց հասանելիք դրամական փոխհատուցման գումարները՝ հայտնելով, որ բնակարանների շուկայական արժեքը բարձրացել է և հնարավոր չէ առաջարկվող գումարով բնակարաններ ձեռք բերել։

Սիսակյան փող. 4-րդ կարգի վթարային հ.16 շենքի հ.34 երկու սենյականոց բնակարանում բնակվել են վարձակալ Սուրեն Ղազարյանի ընտանիքը 5 անձով/ ինքը, կինը՝ Նատալյա Հակոբյանը և երեք տղաները/։ Ս. Ղազարյանը և Նատալյա Հակոբյանը ամուսնալուծված են։ Ս. Ղազարյանի ընտանիքին, որպես վարձակալի ընտանիք, հատկացվելու էր երկու սենյականոց բնակարանին համարժեք դրամական փոխհատուցման գումար, որը կազմում էր՝ 2750 հազ. դրամ։

Աջափնյակ թաղային համայնքի ավագանին, հաշվի առնելով քանդման ենթակա շենքերում բնակվող 10 ընտանիքների դիմումները բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ, 2002 թվականի հուլիսի 18-ի հ. 20 նիստով հաստատել է չորս վթարային շենքերում բնակվող և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին հատկացվող բնակարանների կառուցվածքը և համապատասխան առաջարկություն է ներկայացրել ՀՀ կառավարություն։.

ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի հ.682 որոշման կատարման միջոցառումների մասին» հ.24-Ն որոշմամբ վերը նշված 10 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով լրացուցիչ գումար է հատկացվել՝ Երևանի Աջափնյակ թաղային համայնքի կողմից հաստատված ծրագրով, որի համաձայն՝ Նատալյա Հակոբյանի ընտանիքին հատկացվելու էր 3 հատ երկու սենյականոց բնակարան։

Ս. Ղազարյանի ընտանիքի կազմում 2001-2006թթ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն և հինգ անձից դարձել են ութ անձ /հարսը և երկու թոռները/: Գումարը ժամանակին չհատկացնելու և բնակարանների շուկայական արժեքի բարձրացման պատճառով քաղաքացին հրաժարվել է գումարն ստանալուց՝ պահանջելով գումարի ինդեքսավորում, և Ս. Ղազարյանը նորից դիմել է թաղապետարան՝ խնդրելով լրացուցիչ բնակարան կամ դրամական փոխհատուցում հատկացնել իր ընտանիքին:

Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարը Սուրեն Ղազարյանի ընտանիքի անդամների հետ 2006թ. 1-ին եռամսյակում կնքել է դրամական փոխհատուցում հատկացնելու համար պայմանագիր՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 2006թ. 1-ին եռամսյակի բնակարանների շուկայական միջին արժեքով հաշվարկված, առանց Կենտրոն համայնքի, որը կազմել է 35,838 մլն դրամ: Նշված գումարից նույնպես Ն. Հակոբյանի ընտանիքը հրաժարվել է:

Աջափնյակ թաղային համայնքի ավագանին իր 2006 թվականի մայիսի 24-ի հ.126 նիստով հաստատել է Ս. Ղազարյանի ընտանիքին հատկացվելիք բնակարանների նոր կառուցվածք՝ մեկ հատ երեք և երեք հատ մեկ սենյականոց բնակարաններ, կամ դրամական փոխհատուցում 40,0 մլն դրամի չափով, որից 35.838 մլն դրամը նրանց ընտանիքին հասանելիք գումարն է, իսկ 4.162 մլն դրամը՝ որպես լրացուցիչ ֆինանսական աջակցություն:

Աջափնյակի թաղապետարանից Ն. Հակոբյանի ընտանիքը ստացել է 34,703 մլն դրամ, իսկ 5,297 մլն դրամ գումար չի տրամադրվել՝ գումար չլինելու պատճառով, ինչը սոցիալական ծանր վիճակ է ստեղծել ընտանիքում

Ելնելով վերոգրյալից՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ